ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ընդդեմ լրագրող Սյուզի Բաղդասարյանի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի դիմումի վերաբերյալ

2019թ. հուլիսի 8-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել **ՀՀ սոցիալական ապահովության նախարար Զարուհի Բաթոյանն**՝ ընդդեմ **լրագրող Սյուզի Բաղդասարյանի**՝ 168.am կայքում 2018թ. մայիսի 4-ից մինչև 2019թ. մարտի 29-ը ժամանակահատվածում կատարված հրապարակումների: Ըստ բողոքի հեղինակի՝ լրագրողն այդ ընթացքում որպես մամուլի խոսնակ աշխատել է նաև «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամում և պետական կառավարման համակարգի մարմինների, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորք» կենտրոնի մասին հրապարակումներ է կատարել՝ հանրությունից թաքցնելով շահերի բախման փաստը: Զ.Բաթոյանը դիմել է՝ ստանալու ԴՄ փորձագիտական կարծիքը՝ այդ հրապարակումներում «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» պահանջների հնարավոր խախտումների կապակցությամբ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Սյուզի Բաղդասարյանը 04.05.2018թ-ից մինչև 29.03.2019թ-ը որպես մամուլի խոսնակ է աշխատել «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամում, որի հոգաբարձուների խորհրդի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է:

2. Այդ ընթացքում, միաժամանակ աշխատելով նաև 168.am կայքում, Սյուզի Բաղդասարյանը հիշյալ լրատվամիջոցում հոդվածներ է հրապարակել պետական կառավարման մարմինների, այդ թվում

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի մասին: Այս առնչությամբ վերջինս Հիմնադրամում զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի գործողությունների համար երբևէ նկատողություն կամ զգուշացում չի ստացել:

3. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին ուղղված իր դիմումում ՀՀ սոցիալական ապահովության նախարար Զարուհի Բաթոյանը մտահոգություն է հայտնում, որ վերոնշյալ հրապարակումներում խախտվել են «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» մի շարք դրույթներ: Դիմումում ընդգծվում է հատկապես, որ հոդվածագիրը հանրությունից թաքցրել է շահերի բախման փաստը:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

2.3. խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ և գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի և հիմնավորվի բուն հրապարակման մեջ:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

1. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը համարում է, որ թեև բողոքի առարկան չի վերաբերում 168.am կայքին, այնուամենայնիվ, առավել արհեստավարժ կլիներ, եթե լրատվամիջոցը այս կարգի նյութեր հրապարակելուց առաջ փաստերի ստուգում իրականացներ: Հատկապես, որ իր

լրագրողը, աշխատելով միևնույն ժամանակ պետական հիմնարկում, կարող էր կողմնակալ վերաբերմունք դրսևորել լուսաբանվող թեմայի նկատմամբ և իրականությյանը չհամապասխանող, կամ մասամբ չհամապատասխանող տեղեկություններ մատուցել: Հետևաբար, նման դեպքերում փաստերի ստուգման պարտավորությունը մեծապես ընկնում է լրատվամիջոցի վրա:

2. Հանրությունն իրավունք ունի իմանալու, թե ինչ է տեղի ունենում պետական կառույցի ներսում, սակայն հանրային այս շահի սպասարկումը պետք է հենվի արհեստավարժության և բարեխղճության սկզբունքների վրա: Ընթերցողն առնվազն պետք է տեղյակ լինի շահերի հնարավոր բախումից, և ինքը որոշի հեղինակի անաչառության աստիճանը:

3. Պետական մարմնի աշխատակիցն իրավունք ունի ԶԼՄ-ների միջոցով հանրությանը տեղեկացնել տվյալ մարմնում առկա խնդիրների մասին, և այդ իրավունքը պաշտպանված է ազդարարման իրավական կարգավորումներով: Սակայն, տվյալ դեպքում Սյուզի Բաղոյանը թաքցրել է իր կարգավիճակը, հանրությանը ներկայացել որպես լրագրող՝ խախտելով լրագրողի բարեխղճության սկզբունքը մի կողմից և հանրային ծառայողի բարեվարքության սկզբունքը՝ մյուս կողմից:

Ելնելով վերը շարադրածից՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը

արձանագրում է, որ

լրագրողը հրապարակումներ կատարելիս հնարավորություն է ունեցել օգտվելու այնպիսի աղբյուրներից, որոնք նրան հասանելի են եղել ի պաշտոնե, որպես պետական կառույցի մամուլի խոսնակի

լրատվամիջոցը նման պարագայում թերացել է բացահայտել/բացառել լրագրողի շահերի բախման փաստը կամ առնվազն իր ընթերցողներին տեղյակ պահել այդ մասին

նպատակահարմար է համարում, որ

լրագրողները ՝ հնարավորինս խուսափեն դերերի շփոթությունից, երբ հանրությանը անաչառ տեղեկություններ ներկայացնելու առաքելությունը կարող է խոչընդոտվել այլ պարտականությունների և շահերի առկայությամբ: Այդ երկիմաստությունից խուսափելու անհնարինության/ոչ նպատակահարմարության պարագայում անհրաժեշտ է սեփական նախաձեռնությամբ հանրությանը տեղյակ պահել շահերի բախման հանգամանքի մասին

լրատվամիջոցները՝

- լուսաբանվող առարկայի նկատմամբ հեղինակի կողմնակալ վերաբերմունքի ակնհայտ առկայության դեպքում հրապարակումից առաջ ստուգեն նրա տրամադրած տեղեկությունները

- հենց տվյալ հրապարակման մեջ ընթերցողների համար հստակորեն բացահայտեն իրենց լրագրողների՝ պետական կամ մասնավոր այլ սեկտորում համատեղությամբ աշխատելու փաստը՝ հանրությանը տեղեկացնելով շահերի հնարավոր բախման մասին

պետական մարմինները՝ մշակեն և ընդունեն լրատվամիջոցների հետ իրենց աշխատակիցների շփման ձևակերպված կանոններ, որոնք նրանք պարտավոր են կիրառել իրենց առօրյա աշխատանքում:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2019թ. հոկտեմբերի 16-ի նիստում, Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր

եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: